

Տ. ՈՍԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԲԱԿՅԱՆ

Ավազանի անունով՝ Ժիրայր: Ծնվել է 1942 թվականի հոկտեմբերի 12-ին Բեյրութում:

Նախնական կրթությունը ստացել է ազգային Քառասնից Մանկանց վարժարանում, ապա սովորել և ավարտել է Էշրեֆիեի ազգային երկրորդական վարժարանը 1957 թվականին:

1957—1960 թթ. աշխատել է որպես դեղագործի օգնական և դեղավաճառ:

1960 թվականին Եկեղեցուն և ազգին ծառայելու ոգին նրան տարել է դեպի Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որը և ավարտել է հաջողությամբ 1964 թվականին:

1963 թվականին Մայր Աթոռում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի, իսկ 1965 թվականի հունվարի 10-ին՝ կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Ասողիկ արքեպ. Ղազարյանի:

1965 թվականի մայիսին նշանակվել է Ավստրալիայի Մելբուռն քաղաքի նորակազմ հայ գաղութի առաջին հոգևոր հովիվ: 1968-ին նշանակվել է Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ:

1967 և 1970 թվականներին Մայր Աթոռում ստացել է վարդապետական և ծայրագույն վարդապետական աստիճաններ՝ ձեռամբ Տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի:

Ավստրալիայում ծառայած տարիներին կազմակերպել է Մելբուռնի այժմյան հայահոծ համայնքի ազգային-եկեղեցական կյանքը, բացել համայնքի միօրյա վարժարանը, հրատարակել եկեղեցական «Յոյս» ամսագիրը և կազմել Տիկնանց, Երիտասարդաց Եկեղեցասեր Միությունները, որոնք գործում են մինչև այսօր:

1973 թվականի մարտին Դամասկոսի հայոց թեմի ազգային-երեսփոխանական ժողովի կողմից ընտրվել է թեմական առաջնորդ, պաշտոն, որը շարունակում է վարել մինչև այսօր:

1977 թվականին, երբ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին դառնում է Եվրոպայի Եկեղեցիների Խորհրդի անդամ, Տ. Ոսկան ծ. վարդապետը Վեհափառ Հայրապետի կողմից նշանակվում է Հայ Եկեղեցու մնայուն ներկայացուցիչը այդ Խորհրդի մոտ:

1982 թվականի փետրվարի 14-ին, կիրակի օրը, Տեառնընդառաջի տոնին, Մայր տաճարում եպիսկոպոս է ձեռնադրվում Հայոց Հայրապետի կողմից:

Տ. Ոսկան եպիսկոպոսը վերջերս Վեհափառ Հայրապետի կողմից նշանակվել է Հունահայ թեմի հայրապետական պատվիրակ և այդ հանգամանքով էլ ձեռնադրվել է եպիսկոպոս: